



Ինֆորմացիայի ազատության կենտրոնի 2013 թ.-ի հարցումների վիճակագրությունն ու դատական պրակտիկան

Տեղեկություն ստանալու հարցումների վիճակագրությունը

2013 թ.-ի ընթացքում Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկություն տնօրինող տարբեր մարմինների ներկայացրել է տեղեկություն ստանալու 203 հարցում:

Հարցումների արդյունքները հետևյալն են՝

- 87 հարցում (42.9%) – ժամանակին լիարժեք պատասխան,
- 41 հարցում (20.2%) – ուշացած լիարժեք պատասխան,
- 13 հարցում (6.4%) – հիմնավոր պատասխան հղումով,
- 21 հարցում (10.3%) – թերի պատասխան,
- 8 հարցում (3.9%) – անհիմն պատասխան,
- 16 հարցում (7.9%) – անհիմն մերժում,
- 17 հարցում (8.4%) – լուր մերժում:

2013թ.-ի ընթացքում ԻԱԿ-ի ուղարկած 203 հարցումներից ոչ մեկին ի պատասխան տեղեկություն տնօրինողները չեն տրամադրել օրինական մերժում:

ԻԱԿ-ը հարցումների պատասխաններն անհիմն է համարել այն դեպքերում, երբ տրամադրվել է խնդրված տեղեկություններից տարբերվող այլ տեղեկություն:

2013թ.-ի՝ տեղեկատվության ազատության իրավունքի կիրառման պրակտիկայի առանձնահատկությունները վերհանելու համար անհրաժեշտ է համեմատություն անել նախորդ տարիների հետ:

Այսպես, լիարժեք պատասխանների թիվը գրեթե չի փոխվել. 2013 թ.-ին այն կազմել է 63%, 2012 թ.-ին՝ 65%, իսկ 2011 թ.-ին՝ 69%: Օրինական մերժում/հիմնավոր հղումների թիվը նույնպես ըստ էության չի փոխվել. 2013 թ.-ին այն կազմել է 6%, 2011 և 2010 թ.թ.-ին՝ 5%:

SU հիմնախնդիրները՝ ըստ ԻԱԿ-ի 2013 թ.-ի հարցումների

Թեև «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը գործում է արդեն շուրջ 10 տարի, իսկ տեղեկատվության ազատության իրավունքը զարգանում է, և այդ իրավունքի կիրառման պարկտիկայում նկատվում է դրական միտում, սակայն, այսօր էլ SU ոլորտում մեծ խնդիր են մնում լուր մերժումները, ինչպես նաև ոչ լիարժեք, թերի պատասխանները: Լուր մերժումների թիվը, սակայն, վերջին մի քանի տարիների ընթացքում կտրուկ նվազել է: Այսպես, 2011 թ.-ին անպատասխան է մնացել ԻԱԿ-ի հարցումների 22%-ը, 2012 թ.-ին լուր մերժումների թիվը կրճատվել է մինչև 15%, իսկ 2013 թ.-ին էլ ավելի է նվազել՝ կազմելով 8%: Այսինքն, 2011 թ.-ի համեմատ լուր մերժումների թիվը 2013 թ.-ին նվազել է շուրջ 3 անգամ: Սակայն, լուր մերժումների թիվը կրճատվում է՝ փոխարինվելով մեծամասամբ թերի կամ անհիմն պատասխաններով կամ անհիմն մերժումներով:

<i>տարեթիվը</i>	<i>թերի պատասխան</i>	<i>անհիմն մերժում</i>	<i>անհիմն պատասխան</i>
2011 թ.	1%	2%	2%
2012 թ.	12%	2%	2%
2013 թ.	10%	8%	4%

Այսինքն, 2011 թ.-ի համեմատ՝ թերի պատասխանների թիվը 2013 թ.-ին աճել է 10 անգամ, անհիմն մերժումների թիվը՝ 4 անգամ, իսկ անհիմն պատասխանների թիվը՝ 2 անգամ:

Սա նշանակում է, որ նախկինում պաշտոնյաները խուսափում էին տրամադրել իրենց կամ իրենց ղեկավարած գերատեսչությունը վատ լույսի ներքո ներկայացնող տեղեկությունները և անպատասխան էին թողնում տեղեկատվություն ստանալու հարցումը: Սակայն այսօր արդեն խնդրահարույց տեղեկատվություն պահանջող հարցմանը պաշտոնյան նախընտրում է ոչ թե չպատասխանել, այլ տրամադրել թերի, խուսափողական, ոչ ըստ էության պատասխան:

SU ոլորտի հաջորդ խնդիրը տեղեկատվության տրամադրման ժամկետների պահպանումն է. շատ դեպքերում ԻԱԿ-ը ստանում է թեև լիարժեք, սակայն ուշացումով պատասխան:

Հարցումների պատասխանները ժամանակին կամ ուշացած համարելիս ԻԱԿ-ն առաջնորդվել է հետևյալ սկզբունքով. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան պետք է տրվի այն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում: ԻԱԿ-ը հարցումներն ուղարկել է փոստով: Ուստի, պատասխանը չի համարվել ժամկետ խախտած, եթե տրամադրվել է 9 օրացույցային օրվա ընթացքում, որից 5 օրն օրենքով սահմանված ժամկետն է, 2 օրը հաշվարկվել է որպես փոստային առաքման ժամկետ և ևս 2 օրը ոչ աշխատանքային օրերն են՝ շաբաթ և կիրակի: Ուստի, անճշտություններից խուսափելու համար ժամկետները հաշվարկելիս որպես հիմք ընդունվել են հարցումներն ուղարկելու օրը և պատասխան գրության ծրարի վրա փոստային ծառայության կնիքի վրա նշված՝ պատասխան գրությունն ուղարկելու օրը:

Հաշվարկման վերոնշյալ մեխանիզմը կիրառելու դեպքում անգամ, **2013 թ.-ին ԻԱԿ-ի ստացած լիարժեք պատասխանների շուրջ 30%-ը տրամադրվել են ուշացումով:** Հաշվի առնելով, որ ուշացած պատասխանն այլևս կարող է անհրաժեշտ չլինել, լինել ժամանակավրեպ՝ հանգեցնելով դիմողի իրավունքի խախտման, ինչպես նաև այն, որ SU մասին ՀՀ օրենքը գործում է ավելի քան 10 տարի, իսկ հազարավոր պաշտոնյաներ անցել են վերապատրաստումներ և ուսուցումներ SU ոլորտում, քաջատեղյակ են օրենքի պահանջներին՝ ուշացումով տրամադրվող պատասխանների խնդիրն այսօր ձեռք է բերում մեծ կարևորություն, ինչպես նաև վկայում է պաշտոնյաների մոտ հրապարակային և բաց աշխատելու մշակույթի բացակայության, կամ այդպես աշխատելու ցանկության բացակայության մասին:

Այս ամենը հաշվի առնելով՝ ԻԱԿ-ը 2013 թ.-ի հուլիսի 1-ից խստացրեց Սև ցուցակի չափորոշիչները: Այսպես, Սև ցուցակում սկսեցին ներառվել ոչ միայն հարցումներն անպատասխան թողած տեղեկություն տնօրինող մարմինների ղեկավարները, այլ նաև նրանք, ովքեր տրամադրել էին թերի պատասխան, անհիմն պատասխան կամ անհիմն մերժում, ինչպես նաև էականորեն խախտել էին տեղեկատվության տրամադրման համար սահմանված ժամկետները (հաշվի առնելով, որ երբեմն հնարավոր են տեխնիկական կամ մարդկային գործոններ, որոնց պատճառով հարցման պատասխանը կարող է օրենքով սահմանված ժամկետից մի քանի օր ուշ ուղարկվել, ԻԱԿ-ը ժամկետի էական խախտում է համարում 15 և ավելի օրացույցային օր ուշացումը):

Ըստ 2013 թ.-ին ԻԱԿ-ի ուղարկած հարցումներին տրամադրած պատասխանների՝ տեղեկատվության ազատության ոլորտում միանշանակ լավագույն մարմիններ չկան:

Մա հիմնականում պայմանավորված է ՏՄ ոլորտում ձևավորված իրավակիրառ պրակտիկայի առանձնահատկություններով: Օրինակ, լիարժեք պատասխանների առումով 2013 թ.-ին լավագույններից էր Երևանի քաղաքապետարանը, որն այդ տարի իրեն ուղղված 14 հարցումներից 13-ին տրամադրել էր լիարժեք պատասխան կամ հիմնավոր հղումով պատասխան: Սակայն, քաղաքապետարանը լիարժեք պատասխաններից միայն 4-ի դեպքում է պատասխանը տրամադրել ժամանակին, մնացած դեպքերում պատասխանն ուշացած է, ընդ որում՝ որոշ պատասխաններ տրամադրվել են հարցումն ուղարկելուց 15 և ավելի օր անց: Մտացվում է, որ քաղաքապետարանը 2013 թ.-ին լիարժեք պատասխանների առումով լավագույններից էր, իսկ ժամանակին տրամադրած պատասխանների առումով՝ վատագույններից: Հարկ է նշել, որ 2013 թ.-ի սեպտեմբերի 28-ին «Ոսկե բանալի, ժանգոտ կողպեք» ամենամյա մրացանակաբաշխության ժամանակ որպես ամենադանդաղ աշխատող մարմին՝ բացասական մրցանակ ստանալուց հետո Երևանի քաղաքապետարանն էականորեն բարելավել է իր աշխատանքը հարցումներին պատշաճ և ժամանակին պատասխան տրամադրելու առումով:

Ըստ 2013 թ.-ին ԻԱԿ-ի ուղարկված հարցումներին տրամադրած պատասխանների՝ տեղեկատվության ազատության ոլորտում վատագույն մարմիններ առանձնացնելը նույնպես միանշանակ չէ: Այսպես, ԻԱԿ-ի հարցումներին տրված պատասխանների առումով վատագույնը «Փարքինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ն է, որը 2013 թ.-ին ԻԱԿ-ի կողմից իրեն հասցեագրված 3 հարցումներին էլ տրամադրել է անհիմն մերժումով պատասխան: Սակայն, պետք է հաշվի առնել, որ բոլոր հարցումները վերաբերել են միևնույն հարցերին, հետևաբար բոլոր 3 դեպքերում էլ ՓԲԸ-ն արտահայտել է իր դիրքորոշումը միևնույն հարցի վերաբերյալ: Նշենք, որ ԻԱԿ-ը ՓԲԸ-ի մերժումը համարում է ոչ իրավաչափ և վիճարկել է դրանք դատական կարգով:

Որպես կանոն, տեղեկություն տնօրինող բոլոր մարմիններն էլ ԻԱԿ-ի 2013թ.-ի ՏՄ հարցումներին պատասխանելու պրակտիկայում ունեն և դրական և բացասական (առնվազն՝ ուշացումով տրամադրված) պատասխաններ:

2013 թ.-ի ՏՄ դատական պրակտիկան

2013 թ.-ի ընթացքում տեղեկատվության ազատության իրավունքի վերաբերյալ ԻԱԿ-ի նախաձեռնած դատական գործերից ավարտվել են 5-ը: Այդ գործերն են.

1. ԻԱԿ-ն ընդդեմ «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի
2. ԻԱԿ-ն ընդդեմ «Համալսարանականներ» համատիրության
3. ԻԱԿ-ն ընդդեմ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի
4. ԻԱԿ-ն ընդդեմ Հայաստանի դեմոկրատական կուսակցության
5. ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ Ֆինանսների նախարարության, ՀՀ ՖՆ Լիցենզավորման գործակալության և ՀՀ ՖՆ Ֆինանսական վերահսկողության տեսչության
6. ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ Ազգային ժողովի

ԻԱԿ-ն ընդդեմ «Համալսարանականներ» համատիրության և ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ Ֆինանսների նախարարության, ՀՀ ՖՆ Լիցենզավորման գործակալության և ՀՀ ՖՆ Ֆինանսական վերահսկողության տեսչության գործերով ԻԱԿ-ը հաշտություն է կնքել պատասխանող կողմերի հետ՝ հաշվի առնելով, որ իմնչև դատաքննության ավարտը տեղեկություն տնօրինողները տրամադրել էին ԻԱԿ-ի հարցումներով խնդրված տեղեկություններ:

Մնացած 4 գործերը ավարտվեցին Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հաղթանակով, ընդ որում՝ ունեցան նախադեպային նշանակություն:

Այսպես՝ ԻԱԿ-ն ընդդեմ Հայաստանի դեմոկրատական կուսակցության և ԻԱԿ-ն ընդդեմ ՀՀ Ազգային ժողովի դատական գործերով դատարանը ոչ միայն ճանաչեց ԻԱԿ-ի՝ տեղեկություն ստանալու իրավունքի խախտման փաստը, այլ նաև պարտավորեցրեց պատասխանողներին

փոխհատուցել ԻԱԿ-ի կատարած դատական ծախսերը՝ կուսակցության դեպքում 100.000 ՀՀ դրամի, իսկ ԱԺ-ի դեպքում՝ 50.000 ՀՀ դրամի չափով:

Առավել կարևոր նախադեպային նխանակություն ունեցան ԻԱԿ-ն ընդդեմ «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի և ԻԱԿ-ն ընդդեմ «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի դատական գործերը: Այս գործերով դատարանը ի թիվս այլ պահանջների, բավարարեց նաև ԻԱԿ-ի պահանջը՝ պատասխանողներին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին ՏԱ իրավունքը խախտելու համար: 2013 թ.-ին կայացված դատական ակտերով «Դուստր Մարիաննա» ՍՊԸ-ի տնօրեն Տիգրան Վարդանյանը տեղեկություն չտրամադրելու համար ենթարկվեց վարչական պատասխանատվության՝ տուգանքի՝ 80.000 ՀՀ դրամի չափով (30.000 ՀՀ դրամ ԻԱԿ-ի առաջին հարցմամբ և 50.000 ՀՀ դրամ ԻԱԿ-ի կրկնակի հարցմամբ խնդրվող տեղեկությունները չտրամադրելու համար), իսկ «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՈԱԿ-ի տնօրեն Ռուբեն Հարությունյանը ենթարկվեց տուգանքի 50.000 ՀՀ դրամի չափով՝ տեղեկատվության ազատության իրավունքը ոտնահարելու համար: Հիշեցնենք, որ նախկինում ՏԱ իրավունքը խախտելու համար միայն մի դեպքում է պաշտոնյան ենթարկվել վարչական պատասխանատվության՝ 2009 թ.-ին, երբ ԻԱԿ-ն ընդդեմ Ելփինի գյուղապետարանի դատական գործով Ելփինի գյուղապետը ենթարկվեց տուգանքի՝ 50.000 ՀՀ դրամի չափով:

Նշված գործերի մասին տեղեկություններ, ինչպես նաև դատական ակտերը հասանելի են ԻԱԿ-ի www.foi.am կայքում՝ «Դատական գործեր» բաժնում: